

# ANNUAL REPORT



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌԷՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



## **Տարեկան հաշվետվություն**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Նախաբան .....5

Գյուտեր եւ օգտակար մոդելներ .....7

Ապրանքային նշաններ եւ արդյունաբերական  
նմուշներ .....9

Ֆիրմային անվանումներ .....11

Տեղեկատվական տեխնոլոգիաներ .....12

Լիցենզային եւ զիջման պայմանագրերի  
գրանցում .....14

Իրավական դաշտ .....14

Միջազգային համագործակցություն .....14

ՀՀ մտավոր սեփականության  
գործակալության կառուցվածքը.....16

Հրատարակվում է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա Արմեն ԱԶԻԶՅԱՆ  
Անդրանիկ ԽԱԶԻԿՅԱՆ  
Մանվել ԲԱԲԱՅԱՆ  
Գոհար ԱԴԱՍՅԱՆ  
Դիզայն եւ էջատում Նաիրա ԱՆԱՆՅԱՆ

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3  
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին  
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին  
Internet: <http://www.armpatent.org>  
E-mail: [armpat@cornet.am](mailto:armpat@cornet.am)

© ՀՀ մտավոր սեփականության գործակալություն

## ՆԱԽԱԲԱՆ

2002թ. մարտի 6-ին Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության եւ առեւտրի նախարարության համակարգի բարեփոխումների եւ մի շարք պետական մարմինների վերակազմակերպման մասին» № 197 որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտոնագրային վարչությունը եւ Հայաստանի Հանրապետության հեղինակային իրավունքների ազգային գործակալությունը միացման ձեւով վերակազմակերպվեցին Հայաստանի Հանրապետության արդյունաբերության եւ առեւտրի (հետագայում՝ առեւտրի եւ տնտեսական զարգացման) նախարարության առանձնացված ստորաբաժանման կարգավիճակ ունեցող Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալության, որը, որպես այդ երկու մարմինների իրավահաջորդ, շարունակում է կրել նրանց հիմնական իրավունքները եւ պարտականությունները, բացառությամբ բնագավառի քաղաքականության իրականացման:

Այս կապակցությամբ եւ հաշվի առնելով հատկապես «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, 2002թ. ընթացքում օրենքի պահանջներին համապատասխան կազմվեցին գործակալության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը եւ համապատասխան մրցութային հարցաշարերը:

Հաշվետու ժամանակաշրջանում արդյունաբերական սեփականության բնագավառի ձեւավորված իրավական դաշտին համապատասխան Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալությունը շարունակեց արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության հետ կապված համապատասխան հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաեւ պաշտոնական տեղեկությունների հրապարակման եւ իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:

## ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈՂԵԼՆԵՐ

2002թ. 33 մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 208 գյուտի եւ 14 օգտակար մոդելի հայտ, որոնցից 214-ը՝ ազգային հայտատուներից, 8-ը՝ օտարերկրյա (աղյուսակ 1): 2002 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 1906:

Աղյուսակ 1


Երկիրը	2001	2002
Հայաստան	153	214
Այլ երկրներ	15	8
<b>Ընդամենը</b>	<b>168</b>	<b>222</b>

2001թ. համեմատությամբ 2002 թ. նկատվում է ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակի զգալի աճ՝ 2001 թ. 153 հայտի դիմաց՝ 2002 թ. 214 հայտ: Օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է (2001թ. 15-ի դիմաց՝ 2002թ. 8):

Օտարերկրյա հայտատուներից ստացված 8 հայտերից 2-ը ներկայացվել է Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի (PCT) շրջանակներում:

2002թ. նվազել է ազգային հայտատուների կողմից ներկայացված գյուտերի միջազգային հայտերի թիվը, կազմելով ընդամենը 4 հայտ: Այսպիսով, 1994-2002թ.թ. ժամանակաընթացքում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության միջազգային բյուրո (ժնեւ) ուղարկվել է 31 գյուտի հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում 170 հայտերով անցկացվել է «Արտոնագրերի մասին» 33 օրենքին համապատասխան փորձաքննություն, եւ որոշում է ընդունվել հայտերի պաշտոնական հրապարակման մասին:



- A. Մարդու կենսական պահանջմունքների բավարարում
- B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
- C. Քիմիա, մետաղագործություն
- D. Մանածագործություն, բուլօք
- E. Շինարարություն, լեռնագործություն
- F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ եւ պոմպեր, գեներ եւ ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
- G. Ֆիզիկա
- H. Էլեկտրականություն


Նկ. 1

Գործավարությունն ավարտվել է 186 հայտերով, ընդ որում՝

- 7 հայտով անցկացվել է ըստ էության փորձաքննություն, որի արդյունքում ընդունվել են որոշումներ 20 տարվա գործողությամբ արտոնագիր տալու մասին.
- 149 հայտերով անցկացվել է նախնական փորձաքննություն, որի արդյունքում ընդունվել են որոշումներ 10 տարվա գործողությամբ արտոնագիր տալու մասին.
- 11 հայտերով անցկացվել է փորձաքննություն, որի արդյունքում ընդունվել են որոշումներ օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին.
- 6 հայտով որոշումներ են ընդունվել արտոնագիր տալը մերժելու մասին.
- 13 հայտերով որոշումներ են ընդունվել հայտի հետկանչման մասին:

2002թ. ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ. 1-ում:

Հայտերի քննարկման արդյունքները բերված են նկ. 2-ում:



Նկ. 2


## ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

2002 թվականին ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 620 հայտ (որոնցից 388-ը՝ ազգային հայտատուներից) եւ ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 1 հայտ:

613 հայտերով կատարվել է նախնական փորձաքննություն, որի արդյունքում բոլոր հայտերն ընդունվել են քննարկման: Հայտատուների կողմից հետ է կանչվել 10 հայտ, իսկ 27 հայտի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում: Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել են 654 ապրանքային եւ սպասարկման նշաններ, որոնց բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է նկ. 3-ում:

Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի եւ դրան կից արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշամբ 2002թ. դեկտեմբերի 6-ի դրությամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 1433 ծանուցում: Նախնական մերժման մասին որոշում է կայացվել 500, իսկ վերջնական մերժման մասին՝ 279 միջազգային գրանցումներով, ինչպես նաեւ կայացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցումների զիջումները մերժելու մասին 9 որոշում:

Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 2-ում:



Երկիրը	Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի եւ դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
Հայաստան	388	-	388
ԱՄՆ	71	-	71
Ավստրալիա	-	4	4
Ավստրիա	-	52	52
Բենիլյուքս	-	168	168
Բրազիլիա	6	-	6
Բուլղարիա	18	20	38
Գերմանիա	14	279	293
Դանիա	-	16	16
Եգիպտոս	-	8	8
Թուրքիա	2	44	46
Իռլանդիա	4	1	5
Իսպանիա	-	39	39
Իտալիա	-	104	104
Իրան	11	-	11
Լեհաստան	3	15	18
Լիբանան	2	-	2
Կանադա	2	-	2
Կորեայի Հանրապետություն	2	-	2
Հարավսլավիա	2	3	5
Հնդկաստան	3	-	3
Հունգարիա	-	41	41
Ճապոնիա	16	6	22
Մակեդոնիա	-	3	3
Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	15	31	46
Նիդեռլանդներ	4	-	4
Շվեդիա	1	1	2
Շվեյցարիա	15	216	231
Շրի Լանկա	1	-	1
Չեխիա	-	41	41
Չինաստան	-	13	13
Պորտուգալիա	-	3	3

Պուերտո Ռիկո	2	-	2
Ռումինիա	-	12	12
Ռուսաստանի Դաշնություն	10	79	89
Սլովենիա	-	20	20
Վիրջինյան կղզիներ	3	-	3
Վրաստան	4	-	4
Ուկրաինա	-	7	7
Ֆինլանդիա	-	9	9
Ֆրանսիա	3	166	169
Այլ երկրներ	18	32	50
<b>Ընդամենը</b>	<b>620</b>	<b>1433</b>	<b>2053</b>

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է նշանի գրանցման 1 սիջազգային հայտ:

2001թ. համեմատությամբ 2002թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է՝ 407-ի դիմաց (2001թ.) 388 հայտ:

Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց ակտիվությանը, ապա այն նվազել է եւ՝ ազգային ընթացակարգով (399-ի (2001թ.) դիմաց 232 (2002թ.)), եւ՝ Մադրիդյան համաձայնագրի ու դրա արձանագրության շրջանակներում (2385-ի (2001թ.) դիմաց 1433 (2002թ.)):

Հաշվետու ժամանակաշրջանում Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 15 արդյունաբերական նմուշի հայտ, որոնցից 11-ը՝ ազգային հայտատուներից, 3-ը՝ Գերմանիայից եւ 1-ը՝ Շվեյցարիայից: Դրանցից 14-ի համար կայացվել է որոշում արտոնագիր տալու մասին: 2001թ. համեմատությամբ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը աճել է (2-ի (2001թ.) դիմաց 11 (2002թ.)), իսկ օտարերկրյա հայտատուներից 2001թ. ընդհանրապես հայտ չէր ստացվել, 2002թ. ստացվել է 4 հայտ:

## ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալություն է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 3105 հայտ:

Գրանցվել է ընդամենը 3037 անվանում, որոնցից 1-ը 2001թ. հայտով, մերժվել է 69-ը:

Համաձայն ՀՀ կառավարության 2000թ.

հուլիսի 7-ի N289 որոշման, ֆիրմային անվանման մեջ “հայ”, “Հայաստան”, “հայկական” բառերի եւ դրանց թարգմանությունների օգտագործման համար հաշվետու ժամանակաշրջանում տրվել է 17 թույլտվություն, որը 2001թ. համեմատությամբ 5-ով պակաս է:



## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2002 թվականին հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 4 համար՝ №1 (21), №2 (22), № 3(23) եւ № 4(24) միայն լազերային սկավառակների վրա: Լազերային սկավառակի արտաքին տեսքը բերված է նկ. 4-ում: Տեղեկագրերը հրապարակվել են երկու լեզվով՝ հայերեն եւ ռուսերեն, որոնց մեջ ընդգրկվել են պաշտոնական տեղեկություններ 150 գյուտի, 19 օգտակար մոդելի, 10 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 797 գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին, ինչպես նաեւ տեղեկություններ արտոնագրերի եւ ապրանքային նշանների զիջման պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման մասին (68 գրանցում): Տեղեկագրերում տեղ են գտել նաեւ ստորեւ նշված Օրենսդրական եւ նորմատիվային փաստաթղթերը՝

- Գյուտի ըստ էության փորձաքննության անցկացման կարգը
- Արդյունաբերական նմուշի հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կանոնները
- Օգտակար մոդելի արտոնագիր ստանալու հայտի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կանոնները
- Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ դրանց քննարկման կարգը
- Արդյունաբերական սեփականության օբյեկտների եւ ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված պետական տուրքերի գանձման եւ հաշվառման կարգը:

«Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն գյուտի հայտի պաշտոնական հրապարակման եւ համընդհանուր ծանոթացման դնելու նպատակով տպագրվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի 12 համար:

Հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով հրատարակվել է Հայարտոնագրի 2001թ. տարեկան հաշվետվությունը:

Պաշտոնական տեղեկագրերն անհատույց փոխանցվել են Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երեւանի պետական համալսարանի, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գրադարաններ եւ Հայաստանի ազգային գրադարան եւ ազգային գրապալատ:

Գործակալությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտ-



Նկ. 4

րոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Կենտրոնին տրամադրվել են օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված ինֆորմացիան եւ Pentium-200 մակնիշի երկու համակարգիչներ:

Նախնական պայմանավորվածությամբ, արտոնագրային տեղեկատվության փոխանակման շրջանակներում, ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը պաշտոնական տեղեկագրերի 21 օրինակ եւ տարեկան հաշվետվության 23 օրինակ ուղարկել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ, ինչպես նաեւ՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԳ) եւ Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԱԳ):

Ի կատարումն «Կոմպակտ սկավառակների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի թողարկման մասին» միջազգային համաձայնագրի, որին անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը, թողարկվել են «CISPATENT» լազերային սկավառակներ, որոնց մեջ զետեղված են 150 գյուտի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով: Նշված համաձայնագրին մասնակցում են նաեւ ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանի Դաշնությունը, Ուկրաինան, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովան, Տաջիկստանը, Ուզբեկստանը եւ Եվրասիական արտոնագրային գերատեսչությունը: Սկավառակների տարեկան հավաքածուն ուղարկվում

է PCT-նվազագույնում ընդգրկված երկրների արտոնագրային գերատեսչություններ:

Լազերային սկավառակի արտաքին տեսքը բերված է նկ. 5-ում:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործակալության ավտոմատացման եւ տեխնիկական վերազինման աշխատանքները: Գործակալությունը ձեռք է բերել Pentium 4 տեսակի 22 համակարգիչներ եւ համակարգչային օժանդակ սարքեր եւ սարքավորումներ: Գործակալության ծրագրային համակարգի վերազինման նպատակով ձեռք են բերվել նաեւ մի շարք ծրագրային փաթեթներ:



Նկ. 5

## ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ԵՎ ԶԻՋՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի եւ Ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի համաձայն գործակալությունը շարունակել է լիցենզային պայմանագրերի եւ պահպանական փաստաթղթերի զիջման պայմանագրերի քննարկումն ու գրանցումը:

2002թ. ընթացքում քննարկվել եւ գրանցվել են 70 պայմանագրեր, որոնցից 56-ը՝ ապրանքային նշանների զիջման մասին, 12-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին եւ երկուսը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին:

Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջեւ:

## ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալությունը շարունակել է արդյունաբերական սեփականության օբյեկտների պահպանության իրավական դաշտի կատարելագործման աշխատանքները: Այդ աշխատանքների անցկացման անհրաժեշտությունը հիմնականում բխում էր արդյունաբերական սեփականության ոլորտին վերաբերող գործող օրենքների կիրարկման հետ կապված պրակտիկայից, ինչպես նաեւ Եվրահամայնքի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ «Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի» (ԳՀՀ) պահանջներից:

Վերոհիշյալի կապակցությամբ վերամշակվել եւ սահմանված կարգով համապատասխան մարմիններ են ներկայացվել «Ապրանքային եւ սպասարկան նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքում լրացում-

ներ եւ փոփոխություններ կատարելու մասին» եւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Շարունակվել են նաեւ աշխատանքները «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքը «Արտոնագրային իրավունքի մասին Համաձայնագրի» (PLT) դրույթներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

TRIPS համաձայնագրի պահանջներից ելնելով մշակվել եւ սահմանված կարգով ընդունվել են նաեւ «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», ինչպես նաեւ մտավոր սեփականության պաշտպանության հետ կապված «ՀՀ Քրեական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մտավոր սեփականության գործակալության միջազգային համագործակցության հիմնական ուղղություններն են՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչության (ԵԱԳ) եւ Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱԳ) հետ աշխատանքային համագործակցության զարգացումն ու ամրապնդումը, մասնակցությունը տարբեր միջազգային պայմանագրերին եւ համաձայնագրերին, գործակալության մասնագետների որակավորման բարձրացումն օտարերկրյա եւ միջազգային արտոնագրային գերատեսչություններում ուսուցման եւ որակավորման բարձրացման ճանապարհով, ինչպես նաեւ երկկողմ եւ բազմակողմ կապերի զարգացումը ԱՊՀ երկրների ու օտարերկրյա արտոնագրային գերատեսչությունների, միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ:

2002 թ. ընթացքում գործակալության 11 մասնագետներ մասնակցել են ՄՄՀԿ աշխատանքային մարմինների առավել կարեւոր նիս-

տերին, ինչպես նաեւ ԵԱԳ կազմակերպած սեմինարներին, որոնք անցկացվել են Ժնևում, Մյունխենում, Վիեննայում, Հասագայում, Մինսկում եւ Մոսկվայում:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության ներկայացուցիչները գործուղվել են Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա)՝ մասնակցելու տարբեր աշխատանքային խմբերի նիստերին, որտեղ ՀՀ քվոտաների հաշվին աշխատում են գործակալության երեք փորձագետներ:

Գործակալության երկու մասնագետներ մասնակցել են Բիշկեկում կայացած արդյունաբերական սեփականության հարցերով երիտասարդ մասնագետների կոնֆերանսին:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության մեկ մասնագետ 3 շաբաթով մասնակցել է Ժնևում եւ Վիեննայում կազմակերպած փորձագետների ուսուցողական ծրագրին: Ծրագիրը կազմակերպել եւ ֆինանսավորել էր ՄՄՀԿ միջազգային ակադեմիան:

**ՎԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

